

Տարեկան գինը 10 ռուբլ, կէս տարվանը 6 ռուբլ: Առանձին համարները 5 կոպէկով:

Թիֆլիսում գրվում են միմայն խմբագրատան մէջ:

Օտար քաղաքացիք գինում են ուղղակի Կոպէկով Տիֆլիս. Редакция „Мшакъ“

ՄՇԱԿ

Խմբագրատունը բաց է առաւօտեան 10—2 ժամ (Վաղի կիրակի և սուր օրերից)

Յայտարարութիւն ընդունվում է ամէն լեզուով:

Յայտարարութիւնների համար վճարում են իւրաքանչիւր բառին 2 կոպէկ:

„ՄՇԱԿ“

ԳՐԱԿԱՆԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԼՐԱԳԻՐ

1880 թւին

ՀՐԸՏԵՐԸ ԿՎՈՒՄ Է՝ ԵՄԵՆ ՕՐ, բացի սուր և տոների հետեւալ օրերից:

Լրագրի գիրքը և պրօգրամներն նոյն են մնում: Մենք ստանում ենք ՍԵՓԵՎԿՆԵՆ ՀԵՌԵՎԻՐՆԵՐԻ: «ՄՇԱԿ» տարեկան գինը 10 ռուբլ է, կէս տարվան 6 ռուբլ: Գրվել կարելի է ՄԻՆՅՆ ԽՄԻՆԳՐԸՆԵՆ մէջ:

ԵՌԵՎԱՆԻ ՀՄԵՐՆԵՐԸ ծախվում են 5 կոպէկով հատուկ օտար քաղաքացիք պէտք է գիմել հետեւեալ հասցեով ԿՈՒՄԻՏԵՆԻ ՏԻՓ-ԼԻՏԵՐԱԿՆԵՐԻ ԿՈՒՄԻՏԵՆԻ:

Խմբագիր—հրատարակող ԳՐԻԳՈՐ ԱՐԾԻՐՈՒՆԻ

ԳՐԱԿԱՆԱԿԱՆ ԼՐԱԳՐԻ

Պատասխան «ՕՅՅՈՐԵ» լրագրին:—Ներքին տեսութիւնն Նամակ Գերբեմարտի: Նամակ Երուզու: Ներքին լուրեր:—Արտաքին տեսութիւնն: Գերմանիա:—Մշակիչ հետազոտութիւններ:—Յայտարարութիւններ:—Բանասիրական: Գիւղատնտեսական նկատողութիւններ:

ՊԱՏԱՍԽԱՆ «ՕՅՅՈՐԵ» ԼՐԱԳՐԻՆ

Կրկին ուսաց «ՕՅՅՈՐԵ» լրագիրը պոլէմիկ է սկսում մեզ դէմ, այս անգամ սովի մասին գրված

մեր յօդուածի առիթով, միամիտ և անգործնական համարելով այն առաջարկութիւնը, որ մենք արել ենք սովատանջներին օգնելու համար:

Ուսու լրագիրը ասում է մեր մասին յայտնի առածը թէ չլսել են զանգակի ձայն, բայց չը գիտեն թէ ուր է այն...»

Երբի զանգակի ձայնի ճիշդ որոշելու շուրջը միմայն «ՕՅՅՈՐԵ» լրագրին է տուած վերին նախախնամութեանց...»

Եւ ահա նա ծիծաղում է մեր առաջարկած բարեգործական միջոցների մասին, ծաղրում է մեր առաջարկած քաղաքային մասնաժողովը, որի անդամներ պէտք է լինէին թէ ձայնաւորներ և թէ քաղաքացիներից ընտրվածներ, վերջապէս ծաղրում է մեր յօդուածում յիշված բարեգործական ընկերութեան միտքը...»

Իսկ նրա առաջարկութիւններն ի՞նչ են:

Ֆրագներ և աւելի ոչինչ:

«Դորա համար, ասում է լրագիրը, անհրաժեշտ է ապահովել ժողովրդական հայթայթումն սովից տանջվող վիճակների մէջ այն չափով, որ համապատասխան լինէր յիշեալ վիճակների ազդարնակութեան թւին: Իսկ դորա համար հարկաւոր են նախ և առաջ մեծ կապիտալներ, հացը այնտեղ առնելու համար, որտեղ նա էժան է և այնտեղ բերելու համար, որտեղ նրա մէջ պահանջ կայ, և երկրորդ՝ կոնսորցի հաստատ կազմակերպութիւն այն գործողների վրա հսկելու համար, որոնց յանձնված է հոգալ ժողովրդական հայթայթման մասին:»

Եւ տեսակ ճոճուող ֆրագներին ի՞նչ կարելի է հասկանալ...»

Գոնէ, փառք Եստուծու, որ վերջը ամեն բանի վրա իր օլիմպիական բարձրութեանց նայող լրագիրը ասում է պարզ կերպով թէ ինչ է ուզում:

«Միմայն գէմստիցի հիմնարկութիւնների գոյութիւնը կարող

րանց բերանը զինված է 6 սուր ատամներով: Մէջը մի փոքր կորնթարդ է, մէջ տեղում աւելի լայն, քան առաջի և ետեի ծայրերում: Եղջերաթիւն (НАДРЯМЛЕ) ծայրերը կողմաւ են, փոքր չեն ծածկում: Նորանց ոտները ուժեղ են, թաթիկները հինգ անդամակաւորներ են: Anisoplia austriaca իր ցեղի բոլորիկը ամենամեծ տեսակներիցն է, նորա մարմնի երկայնութիւնը 12 1/3 մմն է 16 միլիմետրի է համարում, այն է մօտ 1/3 վերջին: Էզը աւելի լայն է արուից, երկու սնուների մարմնը մութ կանաչ գոյնի է, մի փոքր փայլուն: Գլխի, մէջքի վրա փոքրիկ կետեր են երևում փոսերի ձևով: Եղջերաթիւնը լերկ են, կարմիր-դեղին գոյնով և բաւականին սաստիկ փայլում են: Մարմնի ներքին կողմը թանձր ծածկած է սպիտակաօրոջ աղուամազներով:

Բոլորիկի թևակները և զետնի երես դուրս դալը համարեա մի և նոյն միջոցում է կատարվում բոլոր բոլոր բունած տեղերում, այդ լինում է մայիսի վերջին կամ յունիսի սկզբում, երանակի չորութեանը նայելով: Առհասարակ ուր բոլորից շատ ուշ է երևում և այն ուղղակի հացաբոյսեր վրա, այլ չէ թէ վայրի խոտերի, պէտք է ընդունել որ նա ուրիշ տեղից է եկել, մնացեալ դէպքերում պէտք է ընդունել նոյն տեղումը դուրս եկած երկու կամ չորս տարի առաջ ամառ սերմերից:

Պատճառագատից (КУКОЛКА) բոլորիկը դուրս դալու ժամանակակիցը տեսում է մինչ երկու շաբաթ և որովհետև այդ ժամանակ համարը դեռ մտնիկ վիճակում է լինում, ուստի բոլորից մտնում է այդ սեղի վրա, որի հատիկների հիւթով էլ երկի կերակրվում է, այնուհետև թաշում է համարի և յետոյ էլ ցորենի վրա հատիկների լքջիւնուն նայելով: Բոլորիկ տեղափոխութիւնը մարտի պէս հեռաւոր տեղեր թաշելով չէ կատարվում, այլ փոքր առ փոքր մի արտիք միւսը յառաջանալով:

Բոլորիկը դարձան պատճառագատից դուրս դալուց թոյլ և սպիտակաօրոյ է լինում և մինչև ամառ նալը մի առ ժամանակ մնում է զետնի երեսին անշարժ, իսկ յետոյ սկսվում է նորա ամենաաշխույթ գործունէութիւնը այն է լսելով սպառել

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ԳՐԱԿԱՆԱԿԱՆ ԼՐԱԳՐԻ

Մենք բոլորս դեռ շատ լաւ յիշում ենք այն յուսահատ սարսափը, որ քանի ամիս առաջ տիրւպետած էր մեր վերադառնալուներին այս անցեալ ամառ միզանում երևեցած մորեխի և մկան պատճառաւ, որոց հետեանքը մանաւանդ այժմ զգալի է դարձած իւրաքանչիւր դասակարգի անձանց համար: Ինչպէս յայտնի է մորեխը մեծամեծ վնասներ պատճառեց Գանձակի, Թիֆլիսի և մասամբ Երևանի նահանգներում, փչացնելով ամենայն տեղ հացի արտերի մեծ մասը: Մուկը ևս իր կողմանէ ոչ փոքր վնաս պատճառեց Երևանէտապօլի նահանգում նոյն հացի արտերին: Մեզ յայտնի են թէ որչափ տերութիւնը հոգ էր տանում այդ չորիքների առջին աննկու համար, ինչպիսի միջոցներ սկսեց գործ դնել, որպէս զի պաշտպանէր վերապիտանի ցանքերը փչանալուց, զիտեղ որ ժողովուրդը ևս իր կողմանէ մասնակցում էր այդ աշխատութեանց ամենայն յօժարութեամբ, որովհետև պարզ տեսնում էր իրեն սպառնացած դժբաղդութիւնը—սովը: Բայց ցաւալին այն է, որ միայն վտանգն երևալուց յետոյ են սկսում ամենքը մտածել, խոսել և գրել նորա վրա, իսկ մինչ այն ոչ ոք նորա մասին չէ մտածում: Մորեխը ի վաղուց յետէ ժամանակ առ ժամանակ անպիսի բաղձութեամբ մեր արտերի վրա երևալով՝ փչացնում էր արտերը և պատճառում էր թանգութիւն և սով անգամ, ժողովուրդը սովորել էր ձևաբեր ծալած նայել այդ պատահարներին իբրև Աստուածանից ուղարկած պատիժ իրենց մեղաց համար և չը գիտէր ոչինչ արմատական միջոցներ նորանցից նախազգուշանալու և նորանց դէմ մարտաւար համար: Մորեխի և մկան պէս ուրիշ բաղձալիւ դժբաղ-

դութիւնը ևս կան, որոնք համարեա միմանց ետեւից վրա հասնելով սպառնում են գիւղականի ամբողջ տարեկան արդիւնը փչանալուն: Յիշեց չորամի նիւնգութիւնը, յիշեց խաղողի հիւսնգութիւնը—թ ո զ ը, որ խաղողի ողկոյնները մոլոր պէս ծածկելով այրում փչացնում է ամբողջապէս, յիշեց եղջերաւոր անանոց ջարդը, որ նոյնպէս չըջարեաբար պատճառելով սպառնում է գիւղականների հօտերը: Սրբա պղէն մեզանում երևեցածներն են, քանի այդպիսիներն էլ դեռ սպառնում են մեզ իրենց վարակմամբ: Յիշեց սորանցից՝ Ամերիկայում երևացած գետնախնձորի բոլոր, բոլոր կոլորազոն, որ գետնախնձորի բոյսերն է փչացնում, յիշեց Ֆիլիսթինը—մի տեսակ փոքրիկ միջատ, որ արևմտեան Եւրոպայի խաղողի պղիններն է փչացնում, յիշեց վերջապէս ցորենի բոլոր, որ Ռուսաստանի քանի մի նահանգներում երևալով արդէն քանի տարի է սկսել է ցորենի արտերը աւերել:

Տէրութիւնը ամենայն անգամ, երբ մի այդպիսի չորիք է սպառնում, ամենայն տեսակ նախազգուշութեան միջոցներ է սկսում գործ դնել ժողովրդին այդ դժբաղդութիւններից ազատ պահելու համար: Տեսնում ենք որ մորեխ երևացած տարիներում ամենայն տեղ կառավարութեան կարգադրութեամբ մարդիկ են դուրս գալիս դաշտերը մորեխը կոտորելու համար, այդպէս էլ Ռուսաստանի այն նահանգներում, ուր երևացել է ցորենի բոլոր, ժամանակաւոր օրէջներ են հաստատված ժողովրդի համար՝ բոլոր հաւաքելու, կոտորելու մասին:

Բայց պէտք է գիտենալ որ այդպիսով շատ քիչ կարելի է օգնել վտանգին, այլ որպէս զի ժողովուրդը կատարեալ ապահոված լինէր իրեն ըստպատեցող դժբաղդութիւնների դէմ, անհրաժեշտ այդ բոլոր երևոյթները, ուսումնասիրած լինէր այդ զանազան կենդանիները—միջատները, տեղակալները նորանց կենսիկ պայմաններին, որպէս զի նոցա յայտնվելուն պէս իսկոյն ձանաչէր նորանց և զիտեար թէ ինչ պէտք է արած, որ նորանց յաջողաբար զարգանալուն դէմն առնէ: Ահա այս

էր մասամբ բաւականացուցիչ կերպով լուծել ինդիքը, վերջացնում է ուստի թերթը:

Մենք կը համարձակվենք հարցնել ուստի լրագրից, ինչի Ռուսաստանում, որտեղ զէ մտով զննելու կան, նրանք անգոր են սովի երեւալուն և օրից օր սաստկանալուն առաջն առնել:

Այդ այն պատճառով է որ զէ մտով թէ հացի թանգութեան և թէ մանաւանդ սովի յայտնվելու ժամանակ կարող է նոյնքան և ոչ աւելի անել քան թէ մասնաւոր ինքնաշահութից գրգռած բարեգործութիւնը, այսինքն միմիայն ժամանակաւորապէս դեղ անել և ոչ թէ արմատական դարման անել ցաւին ու հիմնական վերանորոգութիւն գործել մի հասարակութեան ամբողջ, ինքն ըստ ինքեան սխալ տնտեսական կազմակերպութեան մէջ:

Ահա հասարակ որ սով չը լինի մի հասարակութեան մէջ, պէտք է ոչ թէ սովի յայտնվելուն պէս սովին առաջն առնել, այլ պէտք է առաջուց այնպէս անել որ սովը չը կարողանայ յայտնվել, եթէ հացի պաշարը մի օր թանգանայ: Իսկ երբ արդէն յայտնվեցաւ, եթէ դրուստն ուզում է,ք իմանալ, բոլոր միջոցները պալեատիւ, առ երես միջոցներ են:

Վարչական (աղմկիստրատիվ)

Իր ճանապարհին հանդիպած կերը՝ առաջ սեղը, իսկ յետոյ և հացանաթիկները, եթէ բզէզի յարձակման ենթարկված հացարդարի հատիկը պղնձած է լինում և բզէզի ատամներին տեղի չէ տալիս, այն ժամանակ նա հասկի մէջ քրքրելով գետին է թափում հատիկները: Anisoplia կերակրվում է բոլոր հասկաւոր հացահատիկներով, բացի եղիպատարներէն, վարակից և կորեկից, չէ օւտում և իւզաւոր բոյսերը, արմատապտուղները, սեւա գորկերը, պատիճաւոր բոյսերը: Հացարդարի վրա յարձակվելով՝ բզէզը ծծում է ձևակերպող հատիկի հիւրը:

Բզէզները սննդովուց յետոյ զուգարովում են և դրանից յետոյ արուն ստակում է, իսկ էզը փորելով գետինը մտնում է այնտեղ, սերմեր ածում ու նոյնպէս ստակում: Հացի բզէզները սերմերը կտրած և կամ երկայնաձև են լինում, սպիտակ գոյնով և հասնում են մինչ կորեկի կամ կանաչի հատիկի մեծութեան: Սերմերը առաւել լաւ զարգանում են չափաւոր խոնաւ հողի մէջ, իսկ չոր գետնում նոյն փչանում են: Ածած սերմերից անան մտերբում դուրս են գալիս որդեր (Личинки): Որդերի մարմնը 12 օղակներից է բաղկացած լինում:

Հացակեր բզէզների որդերը սերմերից դուրս գալուց քիչ շարժական են լինում, բայց յետոյ խիստ արագաշարժ են դառնում, հեշտութեամբ և շուտով փորելով փխրուն հողի մէջն են մտնում և լաւ սողում են: Հողի մէջ մտնելով որդը իր համար մի խոր է չինում, որի մէջ և կամաւառակ թէքութեամբ գետնը զննում է, այդ խորշի շրջապատող հողի էլ պնդելով՝ կոկոնի պէս մի բան է կազմում: Հողի յատկութեան, տարբայ ժամանակներին, եղանակի վիճակին նայած՝ որդերը խրվում են հողի մէջ քիչ կամ շատ: Գիտուն հողի մէջ նոյն հեշտութեամբ են խրվում և աւելի խոր էլ են խրվում, քան կոչո հողի մէջ, երաշտութեան ժամանակ: Նոյնպէս անան և ձմեռը որդերը աւելի խոր են լինում, քան գարնան և ամառը խոնաւ եղանակում: Յորնակեր բզէզի որդը մնում է հողի մէջ բոյսերի փտածով կերակրվելով, այդպէս անց է կացնում ամբողջ երկ-

միջոցներով թէ կուզ զէ մտովն կամ ուրիշը լինի առաջարկված վարչական հիմնարկութիւնը, հացի թանգութեան և սովի պէս ցաւի դէմ, որ ունի իր խոր արմատներ մի երկրի էկոնոմիական կազմակերպութեան մէջ, ոչինչ, կամ նոյնքան կարելի է անել, որքան և բոլոր միւս ժամանակաւոր միջոցներով:

Իսկ տնտեսական մշտական ամբողջ կարգը փոխելու համար, հարկաւոր է որ արդիւնաբեր ու թիւն անձնական շահասիրութեան, որի տեսակներն են՝ չարչիութիւն, ափէրիստութիւն, հարստահարութիւն և այլն...:

Դորա համար հարկաւոր է վտանգի յայտնվելուց շատ առաջ գործել, գրգռելով երկրի արդիւնաբերող ոյժերը ինքնուրոյն կերպով գործելու, զանազան հարստահարող ոյժերի անտանելի և կործանիչ լուծից ազատվելու համար:

Այդ մենք մեր կարողութեան չափ միշտ արել ենք, տարիներով բարոզելով արդիւնաբերող ընկերութիւններ, փոխաւոր ընկերութիւններ, գիւղական կրեդիտ... Արդեօք եւրոպական Ռուսաստանի զէ մտովները լուրջ կերպով այդ մասին որ և է ժամանակ հոգացել են... Այլ, նրանք մրնացին պաշտօնական, վարչական

բոլոր տարին և միայն հետեւել տարվայ գարնան փոխվում է պաճուճապատի, որը սկզբում սպիտակապոյն է լինում, իսկ ձմերութեան հասնելուց գորշ-դեղին է դառնում: Այդ վիճակի մէջ բզէզը կենում է երկու կամ երեք շաբաթ և այնուհետև բզէզի է փոխվում: Բզէզի փոխվելուց մի առ ժամանակ էլ էէնց հողի մէջն է մտնում, բայց և վերջապէս երես դուրս գալուց էլ մի քանի օր մնում է հանդիստ, կարծես իր ոյժը ժողովուհ համար:

Բ.

Anisoplia austriaca բզէզի հասուցած չարքը յայտնվելու և նրա կենսաբանական պատմութիւնը փոքր ինչ մանրամասն դնելուց յետոյ մի կարճատև կերպով էլ ցոյց տանք թէ Ռուսաստանում ինչ միջոցներ են գործ դնում այդ բզէզից ազատվելու համար: Այնտեղ բոլորն էլ այն կարծիքն էին, սկզբում, որ պէտք է աշխատել բզէզների ցեղը ջնջել նորանց կոտորելով և այդ նպատակի համար շատ տեսակ բզէզ որսորդ մեքենաներ հնարվեցան անցեալ 1878 թուականում մէկը միւսից աւել կամ պակաս անյարմար: Մինչև այժմ այդ մեքենաներից չը տեսնվեցաւ այն օգուտը որ սպասվում էր նրանցից, որովհետև շատ անգամ նրանցով աւելի վնասում էին արտերին, քան թէ որքան բզէզ էին որսում: Այնու ամենայնիւ դրանց վերջնական արդիւնքը կերեայ առաջիկայ 1880 թուականին, երբ բզէզների թիւը միլիարդներով է սպասվում: Կարծիք չը կայ որ բացի մեքենայով որսալուց ձեռով էլ հաւաքում էին բզէզները, բայց շատ պարզ հասկանալի է, որ այդ միջոցներով ոչինչ չէ կարելի յառաջանել միլիոնաւոր բզէզների դէմ: Բզէզներին այդպէս մեքենայով կոտորելու համար հնարած միջոցներն են՝ մի ուրիշ խոզիկը էլ ծագեցաւ նրանց բնատուր և նա արար կոտորելու համար: Պրոֆէսոր Մեչնիկովը հնարք և միջոց սկսեց որսնել գործնի բզէզների վրա օտարաբոյս-միջատներ (паразиты) պատուաստելով՝ հիւանդութիւն գցել նրանց մէջ, որով ինքեանք կոտորւելին առանց մի օր և իցէ աշխատութեան մարդու կողմանէ, և թէ և նա իր

հիմնարկութիւններ, ժողովրդի կարիքը չը ճանաչող կազմակերպութիւններ...:

Իսկ ումնից են բաղկացած զէ մտովները, — նոյն իսկ ժողովրդի ներկայացուցիչներից:

Որտեղ նոյն իսկ ժողովուրդը իր տնտեսական ամենասահարածեշտ պահանջների մէջ չունի ոչինչ ինքնատուր, այնտեղ ոչինչ չէ օգնի մի հիմնարկութիւն, որ կազմակերպված է զէպի իր ամենասահարածեշտ շահերը անհող մնացող նոյն ժողովրդի ընտրեալներից:

Իսկ թէ մենք տարիներով բարոզել ենք կամ չենք բարոզել այն ձևի տնտեսական հիմնարկութիւնների իրագործելը, որոնց վերև յիշեցինք, — այդ մասին թող «Օժօրք» լրագիրը ներդրիւն քաշի թերթել «Մշակի» անցեալ տարիների համարները:

«Օժօրք» լրագրի յօդուածը դիպչում էր թէ մեզ և թէ «Тифл. Вѣстн.» լրագրին: Այդ վերջինի պատասխանից բազում ենք հետեւեալ ուշադրութեան արժանի տողերը:

«Այնք թէ զէ մտովի բոլոր բազմաթիւ գործողութիւնները աշողութեամբ են կատարվում, — բայց ի՞նչ պէտք է անենք մինչև որ այդ հիմնարկութիւնը կը մտցնի

փորձերով ապացուցեց որ այդ բանը հնարաւոր է, բայց թէ դեռ ևս գրանցից էլ մի այնպէս արդիւնք չէ երեւցել և նոյնպէս ապագան կարող է ցոյց տալ այդ եղանակի օգտակար կամ անօգուտ լինելը: Այս լինելով միջոցներից փոքր ինչ առաւել յուսալի է այն եղանակը, որով առաջարկում են բզէզները կտրել սերմին և որդի դրութեան միջոցներով, այդ բանին հասնել կարելի է հողը պատշաճաւոր կերպով հերկելով և բազմիցս նոսրան չըջնելով:

Գ.

Բզէզների դէմ մարտաւել միջոցների վրա մրտածելով, ուստի զիւղաճանաչեաները հասան ի վերջոյ մի իրիտ կարեւոր եղանակութեան, որ բոլորովին օրիշ պայմանների մէջ դրաւ բզէզների ցեղը սպաւելու ինդիքը և որի վրա մենք կը հրաւիրենք մեր գիւղաճանաչեաների խորին ուշադրութիւնը: Այդպէս դարեւրից յետոյ փորձերը ապացուցել են որ երկար միջոցով մի և նոյն տեղում և նոսրաւոր տարածութեան վրա մի և նոյն տեսակ բոյսի մշակութիւնը բարենպաստում է այն տեսակ միջատների զարգացման, որոց համար նոյն բոյսը կերակուր է կազմում: Այսպէս կը լինէր ենթադրել թէ միջատը քաղցածութիւնից ստիպված իր բնութեան համադրատեսակ կերակուր չը գտնելով կը սկսէր որդի բոյսերով կերակրվել: միջատը, ինչպէս և ամենայն մի կենդանի, անքնաւան կերակրով յաջողապէս զարգանալ չէ կարող: Իրաւ է նա մի առ ժամանակ կը շարունակէ իր պոռթկումը, լարելով իր ոյժերը գոյութեան համար կուր մէջ, բայց այդ կուր նորահամար իզուր չէ անցնի: նա կը տկարանայ, կը նիհարանայ և վերջ ի վերջոյ կը չքանայ: Թէ շատ բոյսերի յատուկ են առանձին առանձին օտարաբոյս-միջատներ — շորան կարող են ապացուց լինել Ամերիկայում գիտնախննդի վրա երեւցած բզէզ-կօրօրան, արևմտեան եւրոպայում խաղողի տունկերի վրա յայտնված ֆիլոփիլերը, Ռուսաստանի շատ կողմերում վուշի (կտաւահատ, ЛЕНЬ), արեւածաղ-

մեզ մտ... Ազգաբնակութիւնը թող կորչի, թող աղաղակի օրական օգնութեան մասին, թող նա այսօր ոչինչ չը ստանայ, չունենայ մի կտոր հաց անգամ, — մինչև որ «Օժօրք» լրագրի ջանքերով մենք կունենանք մեր երկրում զէ մտովի հիմնարկութիւնը:

Գ. Ա.

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԱՄԱԿ ԴԵՐԲԵՆԻՑ

Յունվարի 14-ին

Գէրբէնդի թէ բնիկ և թէ օտարական հայրիկ կանայք կարելի է երկու հակապակեր դասերի բաժանել: առաջին դասը կազմողը զվաւորապէս օտարութեան պաշտօնատարների կանայք են, իսկ երկրորդ ամենամեծ դասը հասարակ ժողովրդեան: Առաջինները փոքր ի շատ կը թված լինելով, վայելում են կենսաբան այն ամենայն դուարութիւնները, որ կարելի է, գտնել այսպիսի մի կըլզիացեալ քաղցրի մէջ, ինչպէս Գէրբէնդն է: նրանց առաջ բաց է կուրը, թատրօնը, գիտական հանդէսը, քաղաքային պարտիզի զբօսանքները, և այլն և այլն: մինչևեւ հասարակութեան մեծամասնութիւնը դուրի է այս ամենից: նա նահապետական ամօթխածութեամբ փակված է դեռ իր տանը: նրա միակ զբօսառեղին ազգակցի տունն է, կամ շատ շատ այդինքը: այդ անձուկ չըջնի մէջ ի հարկէ ինչ պէտք է լինի նրա մտաւոր կարողութեան մտնողը, եթէ ոչ հայկական գէշ սովորութիւնները բամբասանք, ծարր, զրպարտութիւն և այլն: Այսպիսի անմիթար դրութեան մէջ եթէ կայ նրա մի օրինակ կենսաբան մէջ մի փոփոխութիւն ձգող ներուշթ, այդ երբեմն կրթեմն սիրտները ներկայացուցներն են, որոնք դժբաղդաւոր երկու երեք տարին մի անգամ հազիւ են գուրս գալիս:

Իր, ձակընդդի (բանջար կամ ճարխալ, СВЯТО-ВУДА) վրա յայտնված առանձին առանձին թըրթուրներ ու բզէզները և վերջապէս զաշտային նահանգներում ցորենի ցանքերի վրա յայտնված ցորենի-բզէզը: Այդ տեսակ երկուքներ կրկնվում են զանազան կողմերում և ընդհանրապէս այնտեղ, ուր զվաւորապէս մի օր և իցէ բոյսի մշակութեամբ են զբաղվում, նշանաւոր տարածութիւնների վրա:

Ան այս իրողութիւնների յայտնվելը ուստի զիւղաճանաչեաներին մտածել տուաւ, որ ցորենի-բզէզի դէմ մարտաւելու համար զվաւոր պայման պէտք է այն լինի, որ նոյնք անընդհատապէս պայմանների մէջ զնվին իրանց յաղտապէս զարգանալու: վերաբերութեամբ, այսինքն նրանց պէտք է զրկել իրենց բնութեան համապատասխան կերակրից: Բայց թէ արանց չը պէտք է եղանակները որ հարկաւոր է ցորենի մշակութիւնից բոլորովին ձեռք վեր առնել, երբեք ոչ: այլ միայն հարկաւոր է ցանքերը փոփոխել, և չէ թէ շարունակ տարեցատր մի և նոյն բոյսը ստակել: Anisoplia austriaca բզէզի կերպարանափոխութիւնները պատմելուց, սասցինք որ սերմերից դուրս եկած որդիները ամբողջ երկրորդ տարին գետնի մէջ են մնում որդի վիճակում և միայն նորա հետեւել տարին բզէզի փոխվելով սկսում են ուտել արտերը, ուտի և ցորենի ցանելուց պէտք է հրածարվել միայն այն տարին, երբ Anisoplia austriaca բզէզի վիճակի մէջ էր լինելու: այդ ժամանակ ցորենի փոխարէն կարելի է ուրիշ բոյս ցանել, իսկ հետեւել տարին, երբ բզէզը որդի վիճակում կը լինի կարելի է նորին ցորենի մշակութեան վերադառնալ: Առհասարակ ցորենի բզէզի դէմ մարտաւելու ամենապարզ միջոցը կայացած է ցանքի պարտ ու պատշաճ փոփոխութեան մէջ, որ երկրագործութեան համար իր ուրիշ օգուտները ևս ունի:

Այս մաս օրերս Գէրբէնը արժանացաւ մի հա-
յերէն ներկայացում տեսնելու. պ. Յակովբ Ա.
Գալստեանի յորդորակով ու առաջնորդութեամբ
մի խումբ կազմակերպեց 21-ին ներկայ-
ացրին յօգուտ Մարիամեան օրհորդական դպրո-
ցին յարմարական և «Օսկան Պետրովիչ» պիեսա-
ները: Հասարակութեան մեծ մասը ներկայ էր,
պէտք է ճշմարտութեամբ խոստովանել, որ Գէրբէնը
չառ քիչ անգամ էր այսպիսի յաջող ներկայացում
տեսած. ներկայ եղող ուսանողներն անդամ նա շատ
քաղցր տպագրութիւն է արել, իսկ հայերի բն-
րանից դեռ մինչև այսօր համը չէ գնացել: Մեծ
զօրութեան և շնորհակալութեան արժանի են
տիկին Սառաշեանց, տիկին Նիշանեանց, Օր-
նունէ Մարտիկեանց, Սառաշեան երկու օրհորդ-
ները, օր. Եղիշարէթ Գրիգորեանց, պարսն Անտոն
Մեղիք Գաբայեանց, պ. Գասպար Ամիրեան, Ար-
շակ Շահնազարեանց, Անանիա Եղորդեանց և
այլք առհասարակ, որոնք շատ ընտիր խաղցրին
իրենց դերերը: Ներկայացումից զոյացած զօւտ
արդիւնքը 100 բարի 50 կօպէկ է:

Յուսով ենք որ սիրողներ այս խումբը հասա-
րակութեան դէպք թարթօրէն ունեցած համակրու-
թիւնը տեսնելով, չի դառնայ մի քանի անգամ
ներկայացումներ տուլու և կաշխատէ հայկական
բեմի հիմքը դնելու մի առանձին յարմար տեղի
այնպէս որ ժողովրդեան ամեն դասակարգին մեր
ձեռնարկ լինի: Այն ժամանակ կարծեմ մեծ զարկ
տուած կը լինի ժողովրդի ընտանեկան և հասա-
րական կենսութիւնը:

Գէրբէնը

ՆԱՄԱԿ ԾՈՒՇՈՒՑ

24 յունվարի

Ներքեցեք, պատելի ընթերցող, որ այս նոր
տարվայ սկզբում ինձանից փոխանակ ուրախ
լուրեր բերել, պիտի ձեր գուրջը շարժեմ, պիտի
ձեզ ևս մեր մտատանջութեան կցորդ անեմ: Ամ-
բող Շուշին այժմ կատարեալ սղի մէջ է: Չէք
գտնի մի ընտանիք, որ այս վերջի ամիսներում
զբկված չը լինի իր մի քանի անմեղ երեխաներից
կամ սիրելիներից: Ար թաղով մարդ անցնում է
լացի ու ուրի ձայն է լսուում, ամեն մի քայլի վրա
մարդ զագողի է միայն հանդիպում, ամեն տեղ
միայն ծաղիկ մասին են խօսում: Անտանիկ թանգու-
թիւնը այժմ մոռացել ենք ու անփախելի ծաղիկ
մասին ենք մտածում: Գուցէ ընթերցողը կը մտա-
բերէ անցեալ տարվայ մեր քաղաքի էլի սաստիկ
հիւանդութիւնը կարմուրը և կը հարցնէ ինչու
մեր քաղաքում միշտ տիրում են շարունակ այսպի-
սի հիւանդութիւններ: Այն ինչու: Նախ տները
միմասնց վրա այնպէս սուղ դարձան, որ ո՛չ
թէ միայն նրանց մէջ խտանի օդ չէ խաղում,
այլ միջև եղած ապակեմակ և խեղդող անխա-
ձին անդամ տեղ չունի դուրս գալու և այդ բա-
ւական չէ, մենք էլ արդէն օդառտուից ենք ըսկը
սում պատահանների ձեղքերը և ծակուծուկը
ամբացնել: Գեռ փառք Աստուծոյ, որ քաղաքի մի
մասը (հարուստները) լուրտարի են վառում, որը
գոնէ, թէ և քիչ էլի փխտում է սենեակի օդը, բայց
երեւակայեցեք, որ այդ բուխարի վառողները
թիւր շատ անշնան է, իսկ մեծամասնութիւնը բա-
նացնում է երկաթեայ վառարան և ածուխ, որը
առողջներին էլ կարող է մի օրվայ մէջ միւս աչ-
խարճը ճանապարհել: Երկրորդ փողոցների նեղու-
թիւնը և անապարտիւնը, սուտակ ևս թուրքերի
թաղում, ուր կարելի է ասել, որ դեռ Բանաստեղծի
ժամանակվանից մնում է, կարծես, դրանք համար
մի հնութիւն է: Չանէք թէ՛ մեր քաղաքում չը
կայ ոստիկանութիւն կամ կառավարիչ, բայց ինչ
արած, որ նրանք ոչինչ չեն կարող անել մինչև
հասարակութիւնը չօքնէ և չը կատարէ նրանց
կարգադրութիւնը: Երբ մի ժողովուրդ ինքն չէ
զգում, չէ ճանաչում և վերջապէս չէ ցանկանում
հասկանալ և իմանալ իր օգուտները, պէտքերը,
ինչ անէ այստեղ ոստիկանութիւնը: Երկրորդ
կարծիքով, բնութեան դէմ, ճակատագրի դէմ չէ
կարելի կռուել: Նրանց կարծիքով, Աստուած դիտ-
մամբ է ուղարկում այս ցաւերը և պատահանները
իրենց պատճելու նպատակաւ, և ուրեմն դրա դէմ
օչնչել չէ կարելի անել, պէտք է թողնել ճակատա-
գրի կամքին, ինչ նրա համար գրված է, այն էլ
պիտի կատարվի: Եթէ մէկը ցանկանում է տես-
նել և լսել նախ այդ աշարժումները ու անտիպաչա-
տութիւններ, թող մի քանի օրով շնորհ բերէ մեր
պատական Շուշի:

Մարդիկ վերաբերեալ մի քանի նախապաշար-
մունքներ ևս կը պատմուծ ձեզ և ձեր հետաքրք-
րութիւնը մասամբ կը լցուցանեմ: Մարդիկ ընկնող

ները, որոնց տարբերներ չափազանց է լինում,
սկզբում ուշաժամ են լինում և եթէ իսկոյն բժիշկ
է հանում կամ նրա խորհուրդները չեն լսում,
հենց շատերը այն ժամանակն են հողին աւան-
դում: Պատահանի խօսքով այս ուշաժամ լինելը
նշանակում է, որ ծաղիկ մանածողը նրա հետ խօ-
սում է և բաժին է տալիս: Այդ ժամանակը պէտք
է լուրջը միաձայն ասեն. «ուրախ ծաղիկ ընկ» և
ամեն մի խօսքի մէջ պէտք է կրկնեն մինչև ծա-
ղիկը ամենից դուրս գալը «ուրախութեամբ մտա-
լա, ուրախութեամբ էլ դուրս գայ»: Պէտք է եր-
կու ձու հողի մի գաւաթի մէջ դնեն և հիւանդի
անկողնի տակ պահեն, եթէ չար ուր գալու լինի,
այն ձուաները իսկոյն պէտք է կտորեն: Հիւանդի
բարձի տակ ամենայն մարդ իր կարողութեան
համեմատ պէտք է դնի զեղեցիկ ծաղիկուր չիթ
և փող, որ հիւանդը առողջանալուց բաժանէ
սօղքատներին: Ամենայն դիչեր պէտք է ձեթից
լոյս վառել, իսկ ով ցանկանայ կարող է աւելորդ
և մոմ վառել, իսկ ձեթը դարձեալ անհրաժեշտ է:
Նորասպաններին և երիտասարդներին բոլորովին
անկարելի է հիւանդին այցելել... բժիշկը ան-
կարող է այդ ցաւին օգնել կամ թեթևացնել և
մինչև անգամ անկարելի է այդ հիւանդութեան
մասին նրանից խորհուրդներ հարցնել: Հիւանդի
չորերը և անկողնը անկարելի է փոխել մինչև
լաւանալը, երեսը և ձեռները նոյնպէս անկարելի
է լուանալ: Հիւանդի մայրը ու տատը կամ մօտ
ազգականը պէտք է ամեն օր եկեղեցի գնայ, հի-
ւանդի համար աղօթէ, մոմ վառէ և խաչի կոծակի
ջրից բերի ու հիւանդին խմացնի, ահա այսօրինակ
հաղաբարձը նախապաշարմունքներն են պատճառ
որ տասը հիւանդից երեքը չեն առողջանում,
Համարձակ կարելի է ասել, որ այս հիւանդների
մեծ մասը այդ պատահաններն են դո՛ւ գնում:

Եկեղեցուց ստոր ջուրը բերում են և հիւանդին
ստիպամբ խմացնում, հիւանդութիւնը կրկնա-
պատկում է և յետոյ գանգատվում են թէ խաղը
չօքնեց: Աստիկ տարբերութեան ժամանակն էլ ասելի
են սենեակը տաքացնում և հիւանդին պինդ ծած-
կում ու տարբութիւնը 40 հարցնում և յետոյ յու-
յուսանալով հայտնում թէ՛ ձեթի յարգը չօք-
նեց, չը փրկեց: Մենակը պինդ ամբացնում են և
չեն թողնում կեղտոտ ու վարակված օդը փոխիլ:
միւսներին էլ են վարակում, հիւանդացնում, ու
յետոյ ասում «մեզ նման մեղաւորին դաչանք ինչ
Աստուծ կը լսի, վարդապետն էլ թառափայլ,
հըրան զանչանքն ըն ամբ», մին թափուր չըն գա-
լիս, թա բալբա՛ Աստուծ ուրան դորմութիւնը
հասցնել էս զօրը ցաւան պրճները, աղա-
վները»:

Կարող եմ հաւատացնել ձեզ, իմ համարադա-
քացիներ, որ ոչ թափուրը մեզ կօքնէ և ոչ ձեթն
ու ջուրը, եթէ մենք ինչպէս կարգն է, այսպէս
մտիկ չը տանք մեր հիւանդներին ու չը լսենք բիշկի-
ներին: Մենք մեր ձեռքը տպանում ենք մեր հի-
ւանդներին և յետոյ ասում ենք թէ մեր աղօթքը
չը լսեց: Ինչ էք կարծում, եթէ թափուր լինելը
դուրս եկած և մի շորս կամ ինչ ժամ գուրխներս
բաց այսպիսի ցուրտ եղանակում ձեռնի մէջ աղօ-
թելիք, ծաղիկը կամ միւս հիւանդութիւնները կը
զարգանան թէ՛ կեռապատկելին: Միթէ այնպէս
էք կարծում թէ մենք այն ջրմուսանդութիւնը
ունենք, որ ամեն մեր ուղածը Աստուած անյա-
պաղ կը լսէ: Բաւական է, որքան մեացնիք ֆա-
նատիկոս և տգէտ, կարծեմ, ժամանակ
է ճանաչել Աստուծուն և երկրպագել նմա
ըստ արժանոյն: Քրիստոս մեզ լոյս և ճշմարտու-
թիւն քարոզեց և ոչ խաւար ու անիտութիւն:
Հաւատացե՛ք, որ այս մեր արարմունքով կրկին
ենք Քրիստոսին չարարում ու խաչում:

Ես ասելի մտադրում եմ մեր քանաններին,
որոնց պարտքն է թէ՛ եկեղեցու՛ թէ՛ աներում
քարոզել և հասկացնել ժողովրդին ամեն բան:
Նոյնքան էլ մեղադրում եմ և մեր քաղաքի բժիշկի-
ներին, որոնց սեպու՛ն պարտքն է այցելել աղ-
քատներին տները, հարկաւոր խորհուրդներ տալ, աչ-
խատել հիւանդութիւնը քաղաքիցս արմատախիլ
անել, հրապարակական դատաստութիւններ անել և
այն: Ենթադրենք թէ՛ հենց ծաղիկ համար ձար
չը կայ, ինչպէս ասում են, բայց միթէ չէ կարելի
հաւանդութիւնը թեթևացնել, կամ միթէ չէ կա-
րելի առողջապահական խորհուրդներ տալ, որ ա-
ռողջն էլ չընկնէ ու իզուր տեղը վիշտանայ:

Արցախցի

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐՆԵՐ

ԾՈՒՇՈՒՑ մեզ գրում են, որ ընթերցարանը
դեռ չէ բացվել, որովհետև այն առատ տուրքե-
րը, որ ստորագրեցին, դեռ ևս չեն վճարել:

Մեզ գրում են ԳԱՆՁԱԿԻՑ. «Անցեալ տարի
պ. Ա. Թ.—եանի ձեռքով ստորագրութիւն բաց-
վեց յօգուտ «Արարատեան» ընկերութեան: Մինչև
այժմ որ և է լրագրի մէջ չը յայտնվեց ոչ ժողո-
ված գումարի որքանութիւնը և նրա ուր ուղար-
կելը»:

ԲԱԳՈՒՅՑ մեզ գրում են, որ այնտեղ եղա-
նակը շատ լաւ է: Չմեռվայ ընթացքում միայն
մի անգամ ձիւն եկաւ, մնացած օրերը պարզ և
խաղաղ էին:

Մեզ հաղորդում են ԱՍԱԼՔԱՆՔԻՑ. «Պ. Հա-
ղարպետով «Кавказ» լրագրի № 16-ի մէջ
տպված Արարաբալարի նամակի մէջ ասում է, որ
պիւրի պուրը տպագրւած առաջին տեսակը 2 ր.
20 կ. արժէ, իսկ երկրորդ տեսակը 1 ր. 60 կ.:
Չը գիտե՞ք պարտքը Երբ է դրել այդ նամակը,
միայն հարկաւոր ենք համարում ասել, որ այդ
գնեքը երեք ամիս առաջ են եղել, իսկ այժմ ցո-
րենի ալիւրը դժուար է ճարել և եղածն էլ 3
բարբուց պակաս չէ կարելի գնել, իսկ դարու ա-
լիւրը 2 ր. 20 կ. արժէ: Նոյն նամակում պ.
Հաղարպետեան ասում է, որ մեր գաւառում
բաւականաչափ հագահատիկներ կան, բայց թիչ
օրուք, երբ փողը ձեռքբերու մենք օրերով պիւր
չենք կարողանում գտնել, էլ չբաւոնների մասին
ասելուրդ է խօսել»:

Երէկ, յունվարի 31-ին ԹԻՖԼԻՍԻ Ամբարյան
թատրոնում հայ դերասանական մշտական խումբը
յօդուտ պ. Աւաղանցի ներկայացրեց «Մայրաքա-
ղաք» հինգ գործողութիւններով և եօթը պատկեր-
ներով դրաման: Ներկայացման մասին կը գրենք
հետեւալ համարներից մէկում:

ԱՍԱԼՔԱՆՔԻՑ մեզ հաղորդում են, որ մի
քանի անձինք չըբակայ դիւղերում գաղտնապէս
ցորեան են գնում և գիշերներով փախցնում են Ա-
լեքսանդրապոլ կամ Ղարս:

Մեզ հաղորդում են ԳԱՆՁԱԿԻՑ, որ այնտեղ
առևտուրը ընկած է: Պաշարի գէների գնեքը ան-
համեմատ բարձր են: Ալիւրի պուրը 2 ր. 8 կ.
մինչև 3 ր. արժէ, բրինձը նոյնպէս, հարած խղը
16 ր., գարին 2 ր., սիմիդը 1 ր. 50 կ., մսի
ֆունտը 10 կ., ձուի հատը 3 կ.:

Մեզ գրում են ԱՍԱԼՔԱՆՔԻՑ, որ բկացաւը
տարածվել է և դուխարները դիւղերում: Հի-
ւանդութեան կըբ բարեկալող է լինում: Բաղդա-
նովկա դիւղում այդ ցաւին զոհիկ են միայն չորս
երեխաներ:

ԳԱՆՁԱԿԻՑ մեզ հաղորդում են, որ դեկտեմ-
բերի 23-ին օրհորդաց ուսումնարանի աշակերտու-
հիք երգել են եկեղեցու՛ մ. Գանձակում դա առա-
ջին անգամն է եղել և հասարակութեան վրա շատ
լաւ տպագրութիւն է դործել:

ԲԱԳՈՒՅՑ մեզ հաղորդում են, որ տեղական
թատրոնաւորները պ. Ա. Գրգուրեանի մասնակ-
ցութեամբ օրերումս կը ներկայացնեն «Բողոք խա-
ղապոյի կեանքը»: Միողները մտադիր են բարե-
կենդաններին մի քանի ներկայացումներ տալ:

Մեզ հաղորդում են ԲՕՐԺՕՄԻՑ, որ յունվարի
23-ին մի 48 տարեկան մարդ հարբած ժամանակ
կամեցել է տան երկրորդ յարկի սանդուղանով
ներքև գնալ: Նրա ոտքը սըլքվել է, չորս արչին
բարձրութեանից գլխի վրա ընկել է սառած գետնի
վրա և մեռել:

ԱՍԱԼՔԱՆՔԻՑ մեզ հաղորդում են, որ դու-
խարներին մէջ մի հասարակական վճիռ է կա-
յացել, որ գորութեամբ արբեցողութեանը վերջ
է պէտք է դրիլ: Առհասարակ դուխարները իրանց
հարսանիքների ժամանակ գործ էին անում 20—40
թուրքի արագ, իսկ այժմ սրտված է միայն մի
թուրքի գործ գնել:

Մեզ հաղորդում են ԲՕՐԺՕՄԻՑ, որ հողը կէս
արչին բարձրութեամբ ձիւնով է ծածկված: Հացի
պուրը 2 ր. 40 կ. արժէ, գարին 2 ր., ձուի հա-
տը 3 կ., մսի ֆունտը 12 կ.:

Վրաց «Իրօքթա» լրագրը հաղորդում է, որ
տեղային վարչութիւնը քննում է մտեր-
խի օգնչացնելու հարցը: Այդ հարցը քննելու հա-
մար նշանակված մասնագիտը յայտնել է, որ
մտերխի օգնչացնելու համար հարկաւոր կը լինի ն

5,700 բանօրներ 200 օրվայ ընթացքում: Այն
բանօրների վարձը պէտք է գանձարանը տայ, որ
պէտք է 30,000 ր. ծախսէ:

ԱՍԱԼՔԱՆՔԻՑ մեզ հաղորդում են, որ առ-
գական հասարակութիւնը մտադիր է թոյլառու-
թիւն խնդրել քաղաքային դուռարից 6000 բարբ
ծախսել և այդ գումարով կարօտանքների համար
հաց բերել տալ:

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԳԵՐՄԱՆԻԱ

Վերջին օրերս գերմանական հասարակու-
թեանից մի քանի նշանաւոր անձինք նամակով
դիմել էին կոմս Մօլտէին, որպէս զի նա
այդէ կայսրի վրա փոքրացնել գերմանական
բանակի թիւը: Կոմս Մօլտէ այդ նամակին
հետեւալ պատասխանը տուեց. «Ո՞վ չէ անա-
կեղծ սրտով ցանկանում տեսնել զինուորական
այն ծանր բեռի թեթեւալը, որը Գեր-
մանիան, գանվելով ամենահզօր հարևանների
մէջ, ստիպված է կրել իր ուսերի վրա, այս
ցանկութիւնը օտար չէ ոչ կայսրերին, և ոչ
կառավարութիւններին. բայց սրանից աւելի
բաղաւոր դրութիւն միայն այն ժամանակ
կարելի է սպասել, երբ բոլոր ազգութիւնները
կը հասնեն այն հասկացողութեանը, թէ ա-
մեն պատերազմ, եթէ մինչև անգամ նա յաղ-
թական էլ լինի, այնու ամենայնիւ նա աղ-
գին թշուառութիւն է պատճառում: Այս
հասկացողութիւնը կայսրի գորութիւնն էլ
չէ կարող ներշնչել. դա կարող է միայն ա-
ռաջանալ ազգերի ամենալաւ կրօնական և
բարեյական դաստիարակութեանց, և դա կա-
րող է միայն արդիւնք լինել համաշխարհային
պատմական դարաւոր զարգացումից, մինչև
որը մեզինց ոչ մէկն էլ կենդանի չէ լինի»:

Բերլինից հաղորդում են «Köln. Zeit.» լը-
րագրին, որ իշխան Բիւմարի Վարցինից վերա-
դարձաւ Բերլին, և իջաւ պետական ատենաա-
ղարի սանդը:

Ասում են, որ երեկ պատահմամբ նա հե-
ռացաւ Բերլինից այն մի և նոյն օրը, երբ պ.
Աւրիլ յանձնեց կայսրին իր վերադարձի հա-
ւատարմութիւնը, և երբ պ. Ապուրով հա-
սաւ Բերլին և իջաւ ուսուցիչ դաստիարակութեանը:
«Köln. Zeit.» լրագրի Բերլինի թղթակիցը
ասում է, որ Գերմանիայի Ռուսաստանի հետ
ունեցած պաշտօնական յարաբերութիւնները
լաւ են:

«ՄԵՍԿԻ» ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՄԻՋԱՉԳԱՅԻՆ ԲՆԿԵՐՈՒԹԵՆԻՑ
Ս. ՊԵՏԵՐՈՒՄՅԱՆ, 30 յունվարի: «Правит.
Вѣстн.» լրագրը հաղորդում է հետեւեալը:
յունվարի 27—28 թիւերը Ս. Պետերբուրգի
պօստիկան Վասիլեֆիկի կողմ աներկց մե-
կում գտաւ տպարանական մեքենաներ, շարած
տաւեր, «Черный Передѣлъ» անունով մի
յեղափոխական լրագրի բազմաթիւ տպած
համարներ, մի քանի պուրջ տաւեր, բնակու-
թեան կեղծ վկայագրութիւն և երեք թէփոյլեր-
ներ, որոնցից երկուքը լքցրած էին: Տան մէջ
զանիպղ անձինքը կայանաւորված են:
10 ր. 0 ր. 29 յունվարի (10 փետրվարի)
«Times» լրագրի հաղորդում է հետեւեալը.
Թէ հրանի բրիտանական դեսպանին գրված է
յայտնել պարսից կառավարութեանը, որ Ան-
գլիան ազատում է նրան 1857-ի դաշնա-
դրութեան պարտաւորութիւնից, որի գորու-
թեամբ արգելվում էր նրան գրաւել Հերաթը:
Ս. ՊԵՏԵՐՈՒՄՅԱՆ, 29 յունվարի: Հաստատ
աղբիւրներից արդարանում է այն լուրը, որով
Սկօբօլէվ զլիտաւոր հրամանատար է նշանակ-
վում բոլոր այն զօրքերի վրա, որոնք գտն-
վում են Եկիւնիսներին դէմ մղված արշաւան-
քի մէջ: Սկօբօլէվ ուղեւորվում է այնտեղ
փետրվարի սկզբներում:

Խմբագիր—հրատարակող ԳԻՐԻՊՈՒ ԱՐԺՐՈՒՄԻ

Յ Ա Յ Տ Ա Ր Ա Ր Ո Ի Թ Ի Ի Ն Ն Ե Ր

Մամուլի տակից դուրս են եկել և վաճառվում են Կենտրոնական Գրախճառանոցում հետևեալ գրքերը:

Table listing various books and their prices. Includes titles like 'Մանկական երգեր', 'Քառամյակ մեղու', 'Մարկոսեանի Վարժիք լրացուցիչ', etc.



Կիրակի, յունվարի 27-ից սկսած, Գ ու Ն ի բ ե ան փողոցի վրա, ցիրկի մօտ գտնված բալադանի մէջ կը ներկայացնուի հասարակութեանը երեք պատեղ չը տեսնված երեկոյթ, այն է ԵՒՐՕՊԵՅԻ ԱՌԵՆՔԻ ԶԻՆ ՀԱՎԵՑ ՕՐԻՈՐԻ ԱՄԱԼԻԱ և աշխարհի ամենափոքր կԱՐԼԻԿՆԵՐ ՄԵՐԿԻՉ ՀԵՆՐԻԽ ՎՕԼԳԻ և ՄԵՐԿԻՉՈՒՆԻ ԼՈՒԻՉԷՍ ԶԵՂԵՐԻ գները առաջին տեղեր 50 կոպէկ, երկրորդ 30 կոպէկ: Երեկաները կէսն են վճարում:

Բժիշկ Բ. Կառասարգեանի «Դիֆտերիա» կամ «փողացա» գրքոյը վաճառվում է հեղինակի մօտ քաղաքային հիւանդանոցում, Կենդրոնական գրախճառանոցում և Օ. Գրիգորեանցի Կովկասեան գրախճառանոցում: Գինն է 25 կոպէկ—բարեգործական նպատակով:

ԹԻՖԼԻՍԻ ԱՐՎԵՍՏԱՆՈՐՆԵՐԻ ԿԼՈՒԻԻ զլխաւոր անդամները խորհուրդը ի նկատի ունելով յունվարի 26-ին նշանակված առաջին ընդհանուր ժողովը 29 ԿԱՅԱՆԱԼԷ, կլուրի կանոնադրութեան 12 յօդուածի համեմատ հրաւիրում է կուրբ անդամներին ՀԱՒԱՔՎԵԼ վերադարձի 2-ին, ԵՐԵՎԱՆԵԱՆ Ժամի 7-ին: 2-2

ՆԵՐԿԱՅ 1880 ԹԻՈՒՄ ԿԸ ՏՊԱԳՐՎԻ Կ Ա Յ Ծ Ե Ր

ՎԷՊ ՏԱՃԿԱՍՏԱՆԻ ՀԱՅՈՑ ԿԵԱՆՔԻՑ Հեղինակու թիւն ՐԱՖՖԻ

Վէպը բաղկացած կը լինի երկու առանձին հատորներով իւրաքանչիւրը կը բովանդակէ մօտաւորապէս 400 տպագրված էրեսներ: Ամեն մէկ հատորի գինն է 1 ռ. 50 կ., իսկ միասին 3 ռ.: Մէկ հատորի համար առանձին ստորագրութիւն չէ ընդունվում: Ստորագրել կարելի է ԳՆԻՆՈՒՆԵՐՈՒՄ այն պարոնների մօտ, որոնք բարեհաճել են բաժանորդներ հաւաքել «ԿԱՅԾԵՐ» տպագրութեան համար, իսկ ԹԻՖԼԻՍԻՄՈՒՄ պէտք է գիմել «ՄԵՎԻՍ ԻՍԴԵԱԳՐԱՏԱՆԸ Յ. ՄԷԼԻՔ-ՅԵՆՅԱՆՆԵՐԻ»:

Մի ՀԱՅ ՕՐԻՈՐԻ, որ աւարտել է իւր ուսումն և ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻ օրիորդաց ԳԻՄՆԱԶՆԱՆԵՐԻՑ միտ մէջ, ցանկանում է վարժուհու պաշտօն ստանալ Կովկասի ՀԱՅՈՑ ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆՆԵՐՈՒՄ: Պայմանները խնդրում է ուղարկել հետևեալ հասցէի. С. Петербургъ, Новая улица, домъ № 14 кв. № 10 Хр. Ив, Иоану.

ՄՕՂԴՈՔԻ Օրիորդաց դպրոցի համար պահանջվում է մի ՎԱՐՃՈՒՆԻ շահաւոր պայմաններով. ցանկացողները կարող են դիմել «ՄՇԱԿԻ» խրատագրատունը Յ. ՄԷԼԻՔ-ՅԵՆՅԱՆՆԵՐԻ տպագրութեան մասին խօսելու համար:

ԱՐԳԻՆ ՎԱՃԱՎՈՒՄ ԵՆ 1880

Փոքրագիր Օ Ր Ա Յ Ո Յ Ց Ն. Թ. Բ. Սկզբում գեղարանակ պատկեր՝ Պատրիարքին Հայոց Կ. Պօլսոյ Տ. ՆԵՐՍԵՍԻ

Յ. Բարտուղարին պատգամ. Հայոց Դիմելի ՄԻՆԱՍՏԱՑ ՉԵՐԱՉ Վերջում սպիտակ երեսը յիշատակարանի համար: Գինն է աճեալ տեղ 15 կօպ. Բ. մեծագիր Օ Ր Ա Յ Ո Յ Ց 1880 Ն. Թ. Բ.

Սկզբում գեղարանակ պատկեր՝ ՍՐԲՈՑ ՏՐԳԱՍԱՑ Բոլոր Օ Ր Տ. Հրց. մկ. և Հմբ. գրուած են կարգաւ և ՏԱՂԻԿ ԸՆՏԱՆԵԱՑ Ե. Տ. յաւելուածով Սկզբում գեղեցիկ պատկեր՝ ԴԻՏԱԿԱՒՈՐ ՉԿԱՆ

Գինն է մինչև 600 լ. . . 30 կ. Իսկ նորանից բարձր. . . 35 կ.

Դուրմարով գնողաց զիջումն կը լինի: Ա. Դուրմարեանց ՅԵՐԵՎԱՆ

«Մշակի» առանձին համարները 5 կոպէկով հատը ծախվում են ԹԻՖԼԻՍԻՄՈՒՄ հետևեալ տեղերում: «Վարդանանի» մագաղանում (Արժուրեւ տանը, Դիօրջովի փողոցի վրա, պ. Նազարեզովի մօտ), «Կովկաս» հիւանդանոցի տակ (պ. Գեփրեանցի ծխախոտի խանութում), Չաքարիա Գրիգորեանի գրախճառանոցում (Միխայիլեան կարմուջի մօտ) և դերձակ Գեղարանեանի մօտ, Բէլալեան դպրոցի դիմացը:

ՆՈՐ ՀՐԱՍԱՐԱՎՈՒԹԻՒՆՆԵՐ՝ 1. Երգն կեանց քահանայ—Մանկական երգարան, երգեր և պարերը ընդունված է ներսիւսեան և Գայանեան դպրոցներում: գինն է . . . ռ. 20 կ. 2. Մեծատունեանց—Երգարան աղջկանց և աշակերտուհեաց Հայկական ուսումնարանաց . . . 1 ռ. — կ. 3. Բժիշկ Բ. Նաւասարդեանց—Դիֆտերիա բողազացաւ . . . ռ. 25 կ. 4. Բժիշկ Գ. Տէր-Գրիգորեանց—Վասրակիչ հիւանդութիւններ.

(Մտղիկ, կարմուղ, սկարլառն, բժաւոր տիֆ, անդրադարձ տենդ, դիֆտերիա, ընդհատ տենդ, խօբբայ, դեղին տենդ, որովանատիֆ և ժանտախտ) Սոցա յատկութիւններն, ծագման և տարածման եղանակներն և նախապայտպանական միջոցներ:

Վաճառվում են Չ. Գրիգորեանցի Կովկասեան գրախճառանոցում: 2-5 2. Գրիգորեանցի «Կովկասեան գրախճառանոցում ծախվում են» 1. Գալֆայեան Ա.—բառգիրք Հայ-գաղղիարէն: Dictionnaire Armenien Français. գինն է . . . 6 ռ. 2. Գալֆայեան Ա.—Հայկական գեղարարութիւն, գինն է . . . 1 ռ. 3. Մեծատունեանց (նիշէ վարժապետ) —Երգարան աղջկանց և աշակերտուհեաց Հայկական ուսումնարանաց: Հատ. ա. գինն է . . . 1 ռ. 2-3

ՓԱՐՈՍ ՀԱՅԱՍՏԱՆԻ Վերագրով վեցամեայ ՊԱՏԿԱՆԱԳՐԱԳ Հանդիսի 1880 ամի առաջին տետրն տպագրուեցաւ և այս օրերումս կուղարկուի պատուելի բաժանորդաց: Այս տետրն մէջ աը պուած կան 36 ՊԱՏԿԱՆ, յորոց 12-ն ԱՉԳԱՅԻՆ ԵՆ: ԲԱՃԱՆՈՐԴՈՒԹԵԱՆ 1880 ամի երկու տետրակաց գինն է 2 ուրբլի. իսկ առանձին առանձին գնողները համար իւրաքանչիւր տետրի գինն է 1 ռ. 50 կ. հանդերձ առաքմամբ: Հրատարակիչ Չարմայր Մտերեանց: 1-4

ԹԻՖԼԻՍԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՎԱՐՉՈՒՆԵՐԻՑ յայտնում է, որ ՌՈՒՍԱՑ ԲԱԶԱՐԻ և ՀԱՌԱՐՈՒՐԻ ՀՐԱՊԱՐԱԿԻ վրա կառուցված են ԱՌՆԵՐԱՎԱՆ ԾԻՆՈՒԹԻՒՆՆԵՐ վարձով տարհամար. ուսուց բաղարի վրա 18 համարնի և Հաւաքարի հրապարակի վրա 40: Յիշուշիւթիւնները ՎԱՐՉՈՒՆՎԵՐԻՑ 8ԱՆԿԱՑՈՒՆԵՐԸ հրաւիրում են քաղաքային վարչութիւնը, որի ԳՐԱՍԵՆՏԱԿՈՒՄ ամենայն օր բացի տօն օրերից, առաւօտեան 10 մինչև ժամը երեկոյեան վարձի ՊԱՏԿԱՆՆԵՐԸ կը յայտնվին: 1-3